

244 B

Թիւ 24498
Մարտ 11, 1975

Գերաշնորհ
Տ. Բարզէն Եպս. Վարժապետեան
Առաջնորդի Պատուիրակի ի Ռևաշինկթըն
Ռևաշինկթըն, Տի. Սի.

Սիրելի Բարզէն Եպիսկոպոս,

Ստացած ենք Ձեր եկեղեցւոյ տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Ձեր նախագահութեամբ Յունուար 26ին գումարուած ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ներփակեալ տեղեկագիրը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ճէք Անտոնեան
Կարի Աւեֆիբեան
Միսիթար Տէրաէրեան
Լեւոն Ժամկոչեան